Շրջակա միջավայրի
նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ.-ի դեկտեմբերի 5-ից դեկտեմբերի 7-ը Նորվեգիայի Թագավորություն, քաղաք Բերգեն կատարած գործուղման վերաբերյալ:

**ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
ՀՀ շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու Լևոն Աղասյան

**ԵՐԿԻՐ/ՔԱՂԱՔ /ԺԱՄԿԵՏ**
2023թ.-ի դեկտեմբերի 5-ից դեկտեմբերի 7-ը Նորվեգիայի Թագավորություն, քաղաք Բերգեն

**ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների միջկառավարական գիտաքաղաքական հարթակի (IPBES) քարտուղարություն

**ՆՊԱՏԱԿԸ /միջոցառման անվանումը/**

Կենսաբազմազանության և էկոհամակարգերի ծառայությունների միջկառավարական գիտաքաղաքական հարթակի (IPBES) ազգային համակարգողների երկխոսության հանդիպում:

Հանդիպումը կազմակերպվել էր Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների միջկառավարական գիտաքաղաքական հարթակի IPBES-ի և Նորվեգիայի կառավարության կողմից:

Հանդիպման նպատակն էր հեշտացնել գիտելիքների և փորձի փոխանակումը IPBES ազգային համակարգողների միջև:

- Ընդլայնել կառավարությունների հետագա կարողությունները՝ IPBES-ի ընթացիկ գնահատումներին և աշխատանքային ծրագրերին առավել արդյունավետ մասնակցության համար:
- Բարձրացնել IPBES իրականացված գնահատումների և IPBES-ի այլ արդյունքների օգտագործումը քաղաքականության և որոշումների կայացման մեջ:
- Փոխանակել տեղեկատվություն IPBES-ի գնահատումներում հայտնաբերված գիտելիքների բացերի վերաբերյալ՝ նպատակ ունենալով աջակցելու կառավարություններին նոր գիտելիքների ստեղծմանը նպաստելու հարցում:

Հանդիպմանը մասնակցում էին մոտ 100 երկրներից IPBES-ի ազգային համակարգողներ:

**ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Հանդիպման առանցքային խնդիրներից էր IPBES ազգային համակարգողների միջև փորձի փոխանակման դյուրացումը՝ IPBES-ի շրջանակներում քննարկվող թեմաների և ընթացակարգային հարցերի վերաբերյալ:
Հանդիպումների և սեմինարների ընթացքում քննարկվեցին հետևյալ հիմնական թեմաները և հարցերը.
Քաղաքականության աջակցության գործառույթի ապագա դերի քննարկում
Մասնակցություն IPBES-ի ընթացիկ գնահատումների արտաքին վերանայման աշխատանքներին:

Ամրապնդել կապը գիտության և քաղաքականության միջև կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման, մարդու երկարաժամկետ բարեկեցության համար:

1. Հասկանալ կենսաբազմազանության կարևորությունը 2030 թվականի Կայուն զարգացման օրակարգին հասնելու համար.
2. Հասկանալ կենսաբազմազանության կորստի հիմքում ընկած պատճառները և փոխակերպիչ փոփոխությունների չափորոշիչները և 2050 թվականի Կենսաբազմազանության տեսլականին հասնելու տարբերակները.
3. Բիզնեսի ազդեցության և կախվածության չափումը կենսաբազմազանությունից և բնության ներդրումներից մարդկանց համար.

Քննարկվեցին նաև Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում կարողությունների զարգացման համար կարիքների և հնարավորությունների գնահատման մեխանիզմները: Կենսաբազմազանության պահպանության ազգային հարթակների ստեղծման և աջակցման հարցերը: IPBES-ի տարբեր գնահատման զեկույցներում երկրներից փորձագետների մասնակցությունը և փորձագետների առաջադրման հարցերը:

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ելույթով հանդես եմ եկել և ներկայացրել ՀՀ-ում Կենսաբազմազանության պահպանության ուղղված հիմնական գործընթացները և IPBES-ի շրջանակներում կատարված աշխատանքները:

Քննարկումների ընթացքում ներկայացնելով կենսաբազմազանության պահպանության առկա հիմնախնդիրները՝ համապատասխան պարզաբանումներ և առաջարկություններ տրվեցին քննարկման շրջանակներում ներկայացված հարցերի վերաբերյալ:
IPBES-ի ինվազիվ օտարածին տեսակների գնահատման զեկույցում որը լույս է տեսել 2023 թվականին, պարզ է դարցել, որ Ինվազիվ տեսակները մեծ գլոբալ սպառնալիքներ են ներկայացնում բնության համար (Տնտեսություն, պարենային անվտանգություն և մարդու առողջություն):
Բույսերի և կենդանիների ոչնչացումների 60%- դեպքերում հիմնական պատճառը հանդիսանում են օտարածին կենդանիները: Հայտնաբերվել են մոտ 37.000 օտարածին տեսակներ որոնցից մոտ 3500 մեծ սպառնալիք են հանդիսանում բնության և մառդկանց կյանքի լավ որակի վրա:

Նոր Ազգային ռազմավարությունների և գործողությունների պլանների մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել IPBES գնահատման զեկույցները, ավանդական հմտությունները, տեղական բնակչության և գյուղատնտեսության ներգրավումը կենսաբազմազանության պահպանության գործընթացներին՝ որպես կարևոր բաղադրիչ:
Արձանագրվեց, որ սոցիլական վիճակի վատթարացումը մեծացնում է ծանրաբեռնվածության ազդեցության աստիճանը շրջակա միջավայրի վրա:

Խիստ կարևորվեց տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավման անհրաժեշտությունը բնապահպանական խնդիրների լուծման ոլորտում:

Կարևորվեց մոնիթորինգի մեթոդների ներդրումը Ազգային ռազմավարություններում:

Հատուկ նշվեց, որ անհրաժեշտ է ավելացնել զարգացող երկրներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը:

Շրջակա միջավայրի նախարարության
իրավախորհրդատու՝ Լևոն Աղասյան